22.02.2022թ.
349-66

ՀՀ գլխավոր դատախազ
Արթուր Դավթյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Դավթյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք լրացնել պատասխանն ու տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Քանի՞ գործ է հարուցվել 2021 թվականի հուլիսի 30-ից մինչև 2022 թվականի փետրվարի 21-ը ներառյալ ՀՀ քրեական օրենսգրքի 137.1. հոդվածի («Ծանր վիրավորանքը») հիման վրա։
2. Հարուցված քրեական գործերից քանիսի՞ քննությունն է ավարտվել։
3. Քանի՞ գործ է հարուցվել 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի փետրվարի 21-ը ներառյալ ՀՀ քրեական օրենսգրքի 164 հոդվածի («Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը») հիման վրա։
4. Հարուցված քրեական գործերից քանիսի՞ քննությունն է ավարտվել։
5. 164 հոդվածի հիմքով հարուցված գործերի արդյունքում քանի՞ մարդ է քրեական պատասխանատվության ենթարվել լրագրողների իրավունքների խախտման համար։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում։

Ուշադրություն։ Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով։***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան